Է. ԽԵՄՉՅԱՆ. *Իջևան (Զորոփոր). Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ. հ. 25, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 492 էջ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը լույս է ընծայել «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (ՀԱԲ) մատենաշարի հերթական 25-րդ հատորը: Այն ընդգրկում է ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժնի ավագ գիտաշխատող, բանագետ-բանահավաք Էսթեր Խեմչյանի բանահյուսական նյութերի մեծածավալ ժողովածուն[1]. խմբագիր՝ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյան: Գիրքը տպագրվել է Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի և ԱԺ պատգամավոր Միքայել Վարդանյանի հովանավորությամբ: Գրքի առաջին էջերում հովանավորների կողմից ժողովածուին տրված գնահատանքի խոսքերը վկայում են, որ նրանց անձնական նախաձեռնությունը պայմանավորված է եղել հայագիտության, մասնավորապես ժողովրդագիտության դերի ու նշանակության պատշաճ արժևորմամբ:

Է. Խեմչյանը Իջևանի բանահյուսական նյութերի գրառմանը ձեռնամուխ է եղել 1970-ական թվականներին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում սովորելու տարիներին: Արդեն իսկ հստակ էր նրա մասնագիտական կողմնորոշումը: Անձնական նախաձեռնությամբ սկսած գործը նա շարունակել է հետագայում՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում աշխատելու տարիներին: Բանահյուսական նյութերի գրառումները նա իրականացրել է Իջևանի ենթատարածքի 17 բնակավայրում՝ գրառելով բանահյուսական 2625 միավոր նյութեր. խիստ ընտրությամբ ժողովածուում ընդգրկել է 1322-ը: Ընտրված բնագրերը ներկայացնում են ավանդական բանահյուսության գրեթե բոլոր այն ժանրերը, որոնք բնորոշ են վերոհիշյալ տեղավայրին և աչքի են ընկնում տարբերակների բազմազանությամբ, սյուժետային ու մոտիվային յուրահատկություններով, ամբողջական և ինքնատիպ հորինվածքով ու կառուցվածքով:

Ժողովածուն կազմված է ներածությունից, որում հեղինակը պատմական, պատմահնագիտական բազում տվյալների վկայակոչմամբ ներկայացնում է Իջևանի (Զորոփոր) պատմամշակութային կյանքի տարաբնույթ կողմերը, մանրակրկիտ, հետազոտական վերլուծություններով բացահայտում ժողովածուում ընդգրկված նյութերի ժանրային ու տիպաբանական յուրահատկությունները, լուսաբանում ամենատարբեր ժամանակներում վերոհիշյալ տարածաշրջանում իրականացված անհատական ու խմբարշավային գործուղումների արդյունքները, ինչպես և նյութերի դասակարգման, համակարգման այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնցով առաջնորդվել է ժողովածուն կազմելիս:

Ժողովածուում բնագրերը ամփոփված են՝ վիպական, քնարական, բանաձևային-ասութային և ժողովրդական տոներ, ծեսեր, հավատալիքներ բաժիններում: Հեղինակը նյութերը ենթարկել է ներքին ստորաբաժանման. վիպականում ընդգրկված են հրաշապատում, կենցաղային, կենդանական հեքիաթները: Առանձին բաժին են կազմում պատմական անձանց նվիրված պատումները (Ալեքսանդր Մակեդոնացի, Սողոմոն իմաստուն, Լենկ-Թեմուր, Շահ Աբաս), ավանդազրույցները, հուշապատումները, զվարճախոսություններն ու ստապատումները: Քնարականում ընդգրկված են աշխատանքային, հայդուկային, սիրային, օրորոցային,

[1] *Ժողովածուն հեղինակի՝ Տավուշի մարզը ներկայացնող երկրորդ աշխատանքն է: Առաջինը «Տավուշ» խորագրով ժողովածուն է, որում ընդգրկված են Շամշադինի տարածաշրջանում գրառված բանահյուսական և ազգագրական նյութերը (տե՛ս ՀԱԲ, հ. 21, Երևան, 2000):*

աշուղական, տեղական ստեղծագործողների երգեր, սգերգեր, մանկական խաղերգեր: Առանձին բաժին են կազմում ասութային բանահյուսության ամենատարբեր տեսակները. առած-ասացվածքներ, դարձվածներ, օրհնանքներ, բարեմաղթանքներ, փաղաքշական խոսքեր, երդումներ, գաղտնախոսություններ, անեծքներ, սպառնալիքներ, շուտասելուկներ, հանելուկներ, աղոթքներ:

Հեղինակը հիշյալ շրջանի ժողովրդագիտական պատկերն առավել տեսանելի դարձնելու նպատակով ժողովածուում «Ժողովրդական տոներ, ծեսեր, հավատալիքներ» խորագրով ներկայացրել է տոնածիսասովորութային բնագավառները ներկայացնող նյութեր (Նոր տարի, Մեծ պաս, անձրևառաջացման, անձրևախափան, կարկտախափան ծեսեր, ժողովրդական բժշկություն, գուշակություններ): Կարևորելով ժողովածուի ներքին բովանդակությունը բացահայտող գիտատեղեկատվական տվյալների հաղորդման անհրաժեշտությունը, հեղինակը կատարել է բնագրագիտական մանրակրկիտ աշխատանք:

Է. Խեմչյանը գիտական ջանադիր բծախնդրությամբ ծանոթագրություններում ներկայացրել է բնագրերում առկա, ինչպես նաև արդեն պատմության գիրկն անցած բարբառային դժվարիմաց բառերի ու արտահայտությունների բառարանը, անձնանունների և տեղանունների ցանկերը, համադրական աղյուսակներ, որոնցում ընդգրկված են բնագրերի գրառման վայրը, նյութի ծագման, գրառման ժամանակը, տեղը, բանասացի սեռը, տարիքը, մասնագիտական կազմը, հաղորդած նյութի տեսակը, հեքիաթների համահայկական ու միջազգային զուգահեռներն ըստ «Հայ ժողովրդական հեքիաթներ», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարերի, հարևան ժողովուրդների հեքիաթների ու Սարնե Թումփսոնի համացույցի:

Ժողովածուում ընդգրկված բնագրերը հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացում կազմելու XX դարի 70-ական թվականներից մինչև դարավերջ Իջևանի շրջանի բանահյուսության, մասամբ ազգագրության գոյատևման ու կենցաղավարման մասին: Է. Խեմչյանը հատկապես ավանդապահ ավագ սերնդի բանասացներից գրառելով իջևանյան ուրույն սովորույթները, կենցաղն ու հարուստ բառ ու բանը՝ այս ինքնատիպ տարածաշրջանի հոգևոր մշակութային արժեքները փրկել է մոռացությունից՝ դրանով իսկ հնարավորություն ստեղծելով գիտական ուսումնասիրություններ կատարել Հայաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանի բանահյուսական ժառանգության մասին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այս տարածքը ժամանակին դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

Իր սկզբնաղբյուրային կարևորությամբ Է. Խեմչյանի սույն ժողովածուն աջակից կլինի բանահյուսության, ազգագրության, բարբառագիտության և այլ բնագավառների հետազոտական աշխատանքներին ու արժանի տեղ կգրավի հայ բանահյուսական տպագիր ժողովածուների շարքում:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ